ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2016 թվականի N 714 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 332-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 332-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել «կրթության» բառը.

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը՝ համաձայն հավելվածի:».

3) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. հուլիսի 7
Երևան

Government Decree on ANQ

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հուլիսի 7-ի N 714 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 31-ի N 332 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Մակարդակը	Որակավորումը	Կրթական աստիճանը/ծրագիրը	Բնութագրիչները		
			գիտելիքները	հմտությունները	կարողունակությունը (կոմպետենցիան)
1-ին	**ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**	**Միջնակարգ կրթության 1-ին աստիճան՝ տարրական կրթություն** Տևողությունը՝ 4 տարի	• Տարրական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մայրենի լեզվով գրելու, կարդալու, խոսելու և թվաբանական գործողություններ կատարելու համար: • Տարրական գիտելիքներ բնության, հասարակության, արվեստի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: • Օտար լեզվով սահմանափակ բառապաշարի և արտահայտությունների իմացություն՝ իր անձը և պարզ առօրյա իրադրությունները նկարագրելու համար:	Տարրական հմտություններ, որոնք անհրաժեշտ են պարզ առաջադրանքներ և գործողություններ կատարելու համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պարզագույն կանոններ, գործիքներ, չափիչ ու այլ սարքեր և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՏՀՏ):	• Գործել և սովորել անմիջական վերահսկողության ներքո՝ ծանոթ ու հստակ սահմանված պայմաններում և ներկայացնել կատարած աշխատանքը:

2-րդ	**ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**	**Միջնակարգ կրթության 2-րդ աստիճան՝ միջին դպրոց** Տևողությունը՝ 5 տարի	Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաև բնագիտական, հասարակագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառների առարկաներից՝ հետագա ուսումնառության կամ մասնագիտական պատրաստվածություն չպահանջող աշխատանք կատարելու համար:	Իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական բնույթի որոշակի հմտություններ, որոնք նպատակաուղղված են՝ 1) հանձնարարված առաջադրանքների կատարմանը և առօրյա խնդիրների լուծմանը՝ պարզ կանոնների, մեթոդների գործիքների և սարքերի կիրառման միջոցով. 2) անհրաժեշտ տեղեկատվության որոնմանը, հավաքագրմանը և պահպանմանը՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ. 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների ընկալմանը և գործածությանը:	• Գործել և սովորել վերահսկողության ներքո՝ ծանոթ և հստակ սահմանված պայմաններում, որոշ աստիճանի ինքնուրույնության և պատասխանատվության դրսևորմամբ: • Հասկանալ բնության, հասարակական և առօրյա կյանքի տարբեր երևույթները և կատարել դատողություններ դրանց վերաբերյալ: • Տիրապետել հասարակական համակեցության կանոններին և դրսևորել քաղաքացիական գիտակցության տարրեր: • Դրսևորել ազգային և համամարդկային մշակութային արժեքների ընդհանուր իմացություն:
3-րդ	**ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Հիմնական կրթությամբ)** **(Վարպետային ուսուցման որակավորման վկայական)**	**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր** Տևողությունը՝ 6 ամսվանից 1 տարի	• Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաև հասարակագիտական, բնագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության	• Իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական բնույթի բազային հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) որոշակի մասնագիտական խնդիրների լուծման և առաջադրանքների կատարման համար՝ համապատասխան	• Աշխատանքի և ուսումնառության ընթացքում ցուցաբերել ինքնուրույնություն և ստանձնել առաջադրանքների կատարման արդյունքների հանդեպ անձնական պատասխանատվություն: • Հարմարեցնել սեփական

			բնագավառների առարկա-ներից՝ որոշակի ոլորտում պարզ աշխատանք կատա-րելու կամ հետագա ուսումնա-ռության համար: • Ընդհանուր հասկացություն-ների, սկզբունքների և մեթոդ-ների իմացություն, որոնք բավարար են պարզ մասնա-գիտական գործունեություն իրականացնելու համար:	կանոնների, մեթոդների, սարքերի և գործիքների ընտրության ու կիրառման միջոցով. 2) անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և օգտագործ-ման համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ. 3) օտար լեզվով ամենօրյա կի-րառություն ունեցող արտա-հայտությունների գործածու-թյան համար: • Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և իմացությունն աշխատանքում կիրառելու պարզ մասնագի-տական հմտություններ:	վարքագիծը խնդիրների լուծման ընթացքում ի հայտ եկող հանգամանքներին: • Բացատրել ու կատարել եզրա-հանգումներ բնության, հասա-րակության և առօրյա կյանքի տարբեր երևույթների ու օրի-նաչափությունների վերաբեր-յալ: • Տիրապետել հասարակական համակեցության կանոններին և դրսևորել քաղաքացիական գի-տակցություն: • Կարևորել ազգային և համա-մարդկային մշակութային ար-ժեքները:
4-րդ	**1. ՄԻՋՆԱ-ԿԱՐԳ ԿՐԹՈՒ-ԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ**	**Միջնակարգ կրթության 3-րդ աստիճան՝ ավագ դպրոց** Տևողությունը՝ 3 տարի	• Փաստական և տեսական հիմնարար գիտելիքներ միջնակարգ կրթության բոլոր բնագավառներից՝ հետագա աշխատանքի կամ ուսումնառության համատեքստում: • Աշխատանքի բնագավառին առնչվող ընդհանուր հասկացությունների,	• Տարաբնույթ իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) աշխատանքի կամ հետագա ուսումնառության որևէ բնագավառում կոնկրետ խնդիրներ լուծելու, առաջադրանքներ և ուսումնասիրություններ	• Ինքնուրույն կազմակերպել և կառավարել սեփական աշխա-տանքային կամ ուսումնառու-թյան գործընթացները՝ կանխա-տեսելի, բայց փոփոխունակ միջավայրում և ստանձնել դրանց գնահատման ու բարե-լավման որոշ պատասխա-նատվություն: • Հստակ ուղղորդման ներքո

	2. ԱՐՀԵՍՏԱ-ՎՈՐ (Միջնակարգ կրթությամբ) **(Արհեստագործական կրթության դիպլոմ)**	**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր** Տևողությունը՝ 1-3 տարի	սկզբունքների և մեթոդների իմացություն, որոնք պահանջվում են հետագա մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:	կատարելու, ինչպես նաև գործածված մեթոդներն ու ձեռք բերված արդյունքները վերլուծելու և ամփոփելու համար. 2) տեղեկատվության հավաքագրման, համադրման, դասակարգման և օգտագործման համար՝ կիրառելով ՏՀՏ. 3) օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցվելու համար: • Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և իմացությունն աշխատանքում կիրառելու մասնագիտական հմտություններ:	բացահայտել սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար: • Կազմակերպել այլ անձանց առօրյա գործողությունները: • Կատարել բնության, հասարակության և առօրյա կյանքի տարաբնույթ երևույթների վերլուծություններ՝ կիրառելով հիմնավորման և ապացուցման մեթոդներ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները և դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ: • Արժևորել և գնահատել ազգային և համամարդկային արժեքները:
5-րդ	**ՄԱՍՆԱԳԵՏ** **(Միջին մասնագիտական կրթության դիպլոմ)**	**Միջին մասնագիտական կրթական ծրագիր** Տևողությունը՝ 2-5 տարի	• Հիմնարար և համակողմանի փաստական, տեսական և մասնագիտացված գիտելիքներ՝ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտից: • Մասնագիտության հիմնարար	• Բազմակողմանի և համապարփակ իմացական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) տարաբնույթ, այդ թվում՝ մասնագիտական, խնդիր-	• Որոշ չափով կառավարել և վերահսկել աշխատանքային կամ ուսումնառության գործընթացներ՝ անկանխատեսելի ու փոփոխունակ միջավայրում, ստանձնել սեփական ու այլ անձանց գործողություններին

			հասկացությունների, տեսությունների և մեթոդների իմացություն:	ները բացահայտելու համար. 2) առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: • Հաղորդակցման և ՏՀՏ հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, հասկացությունները, խնդիրներն ու դրանց լուծումները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար. 2) մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու համար. 3) մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալները հավաքագրելու, մշակելու և վերլուծելու համար:	հետևելու և դրանք բարելավելու պատասխանատվություն: • Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և ընդունել որոշում հետագա ուսումնառության վերաբերյալ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները, կենսական տարբեր իրավիճակներում դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ, ինչպես նաև իրականացնել որոշակի վերահսկողություն թիմում այդ կանոնների պահպանման նկատմամբ: • Կիրառել ազգային և համամարդկային արժեքներն առօրյա հարաբերություններում:

Մակարդակը	Որակավորումը	Կրթական ծրագիրը	Գիտելիքները	Հմտությունները			Կարողունակությունը (կոմպետենցիան)
				գիտելիքի կիրառման հմտությունները	հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և տվյալների հետ աշխատելու հմտությունները	ընդհանրական իմացական հմտությունները	ինքնուրույնությունը և պատասխանատվությունը
6-րդ	**ԲԱԿԱԼԱՎՐ** **(Բակալավրի դիպլոմ)**	**Բակալավրի կրթական ծրագիր** Տևողությունը՝ առնվազն 3 տարի (Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգ, այսուհետ՝ ԿՓԿՀ) (180-240 ԿՓԿՀ)	Մասնագիտական աշխատանքի կամ ուսումառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ:	Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական ու առաջադեմ մոտեցումներ և անհրաժեշտ են ձեռք բերած գիտելիքը և իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս:	•Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու հմտություններ: •Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու համար	• Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ՝ դրսևորելով քննադատական մտածողություն: •Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելիս և տարբեր լուծումներ առաջադրելիս:	• Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն: • Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար:

					ՏՀՏ-ներ կիրառելու հմտություններ: •Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:		• Որոշել հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները՝ ելնելով սեփական պահանջմունքներից: •Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
7-րդ	**ՄԱԳԻՍՏՐՈՍ (Մագիստրոսի դիպլոմ)**	**Մագիստրոսի կրթական ծրագիր** Տևողությունը՝ առնվազն 1 տարի (60-120 ԿՓԿՀ)	• Խորը մասնագիտացված գիտելիքներ, այդ թվում՝ տվյալ ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որոնք կիրառվում են ուսումնառու-	Առանցքային մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ • հետազոտական ու նորարական գործունեություն իրականացնելիս՝ տարբեր	• Մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանն իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները հստակ ու	Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները հետազոտելու, արդիական գաղափարներ ու մոտեցումներ	• Մասնագիտական կամ ուսումնառության ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անծանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու

	ԴԻՊԼՈՄԱ-ՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ (Դիպլոմավոր-ված մասնա-գետի դիպլոմ)	**Դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագիր** Տևողությունը՝ առնվազն 5 տարի	թյան, հետա-զոտության և աշխատանքի ընթացքում: • Տվյալ մասնա-գիտական բնագավառի և միջմասնագի-տական ոլորտ-ների տեսու-թյունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների իմացություն:	ոլորտների գիտելիքը համակցելու և նոր գիտելիք ստեղծելու համար, • նոր և անծանոթ իրադրություն-ներում տեսական ու գործնական խնդիրներ լուծելու համար:	համակարգված ներկայացնելու և բացատրելու հմտություններ: • Մասնագիտական և (կամ) միջմասնագի-տական ոլորտնե-րում բարդ խնդիր-ներ լուծելիս և հե-տազոտություններ կատարելիս ՏՀՏ-ները վարժ կիրա-ռելու հմտություններ: • Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտա-կան և (կամ) միջ-մասնագիտական ոլորտներին առնչվող քանա-կական ու որա-կական տվյալները խորը վերլուծելու և գնահատելու հա-մար՝ ոչ ամբողջա-կան կամ սահմա-նափակ տեղեկա-տվության	առաջադրելու, ինչպես նաև ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված նորա-բարական ու ստեղծագործա-լուծումներ առաջարկելու համար:	վերափոխման ռազմանվարական նոր մոտեցումներ: • Նպաստել մասնա-գիտական գիտե-լիքի զարգաց-մանը: • Ստանձնել թիմի ռազմավարական նպատակների իրագործումը վերահսկելու պա-տասխանատվու-թյուն: • Գնահատել իր շարունակական կրթության ու մասնագիտական զարգացման կա-րիքները՝ արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում, ունակ լինել շարու-նակելու ուսումնա-ռությունն արագ փոփոխվող

					պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:		միջավայրերում: •Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը: •Գործել՝ զուգակցելով հայոց ազգային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը համամարդկային արժեքների հետ:
8-րդ	**ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ** **(Գիտությունների թեկնածուի վկայական)**	**Հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր** Տևողությունը՝ առնվազն 3 տարի (180 ԿՓԿՀ)	• Առավել առաջադեմ (առաջանցիկ) գիտելիքներ մասնագիտական բնագավառից և միջմասնագիտական ոլորտներից, որոնք կիրառվում են ուսումնառության, գիտական հետազոտությունների և	Առաջադեմ մասնագիտական հմտություններ՝ ներառյալ սինթեզ և գնահատում, որոնք անհրաժեշտ են՝ • ձեռք բերած գիտելիքը և բնագավառի հայեցակարգային սկզբունքների և մեթոդների իմացությունը բարդ տեսական ու գործնական	• Տեսական ու գործնական, բարդ և համալիր խնդիրներ, հետազոտության արդյունքներ գիտական շրջանակներին և լայն հանրությանը ներկայացնելու և դրանք մեկնաբանելու զարգացած հմտություններ:	Հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) բարդ և վերացական գաղափարներ առաջադրելու. 2) առկա տեղեկատվությունը ու հիմնախնդիրները ներկայացնելու և դրանց վերաբերյալ նոր և	• Գիտակրթական և մասնագիտական առաջատար ոլորտներում նախաձեռնել և ղեկավարել համալիր նորարարական գործընթացներ՝ դրսևորելով գիտական և մասնագիտական բարեխղճություն, անկախություն ու ինքնուրույնություն:

			աշխատանքի ընթացքում: • Մասնագիտական բնագավառի և միջմասնագիտական ոլորտների նորագույն տեսությունների, մոտեցումների, վարկածների և գիտահետազոտական մեթոդների համընդգրկուն և խոր իմացություն:	խնդիրներ լուծելիս, • նորարարական գիտական հետազոտություններ պլանավորելիս և իրականացնելիս:	•Գիտական հետազոտություն կատարելիս և նոր գիտելիք ստեղծելիս ՏՀՏ-ների համակողմանի կիրառելու հմտություններ: • Փոխկապակցված տարբեր ոլորտներից ստացած մեծածավալ քանակական ու որակական տվյալները գնահատելու և օգտագործելու հմտություններ՝ բարդ և համալիր գաղափարներ առաջադրելու և նոր գիտելիք ստեղծելու համար:	ինքնատիպ մեկնաբանություններ անելու համար՝ հիմնվելով գիտական հետազոտության արդյունքների վրա: •Հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) ինքնատիպ հետազոտություն պլանավորելու և իրականացնելու համար. 2) այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք, հանդիսանալով ներդրում գիտության և (կամ) մասնագիտական գործունեության ոլոր-	•Ղեկավարել հետազոտական կամ մասնագիտական թիմ՝ դրսևորելով բավարար ազդեցություն և հանձնառության պատրաստակամություն: •Գործել ի նպաստ ազգի և պետության հարատև զարգացման՝ պահպանելով ու պաշտպանելով ազգային և համամարդկային արժեքները:

						տում, տպագրվում են ազգային և միջազգային գրախոսվող հրատարակություններում. 3) հետազոտության արդյունքները տեսության վերածելու համար:	

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ